

— Թիւսվ երեք — ոչինչ խնայած էին ընելու համար արտասանութիւնները, արտախօսութիւնները, մարզանքներն ու հայկական պարերը կարելիութեան սահմանին մէջ գրաւել ու անթերի:

Հանդէսին կը նախագահէր Վարժարանին Տեսուչը՝ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. որ, Ծաղիկ դասարանի 13 երկսեռ շրջանաւարտներուն երգած «Միաս Բարով, Մանկապարտէշ» երգէն հաջ րաժենց անոնց վկայականներն ու «Պանպոսիթէտով փակեց հանդէսը:

Գ. — Ամսվերջի Հանդէս Երկրորդական Բաժնի

7 Յունիս, Կիրակի երեկոյեան ժամը 6.30—8.30 Վարժարանի սրահին մէջ կառայած այս Հանդէսը վերջին ձեռնարկն էր 1980—1981 դպրոցական տարեշրջանին:

Սրահը գրեթէ ամբողջութեամբ լիքն էր ծնողներու և հրաւիրեալներու կողիկ բազմութեամբ, երբ սրահ մուտք գործեց Միարանութիւնը, գլխաւորութեամբ Լուսաւորարարեան Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գաղանճեանի:

Հանդէսի առաջին մասը կը կազմէր գեղարուեստական բաժինը: «Նմանեալ Մովսէսին» Թարգմանչաց շարականի երգեցողութենէն և Ընթացաւարտ անուանի մը կողմէ կատարուած բազմոյն խօսքէն հաջ, յայտագրի վրայ տեղ գրուած էին զոյգ ատենախօսութիւններ (մին՝ Գլխավորի համալսարանին և միւսը՝ վերջերս վախճանած Ամերիկահայ գրագէտ Ուիլիլմ Սարոյանի մասին), խմբական արտասանութիւններ և հայրենական գողարիկ երգերու փունջ մը, կատարուած բարձրագոյն կարգերու աշակերտութեան կողմէ և ղեկավարութեամբ Տիար Սահակ Գալայճեանի:

Հանդէսի երկրորդ բաժնի սկիզբը, Տեսուչ Տ. Կիւրեղ Եպս. հասուածներ կարգաց Վարժարանի Տարեկան Տեղեկագրէն (որ կ'երևի Սիւնի այս թիւով), որմէ հաջ կատարուեցաւ մրցանակներու և վկայականներու բաշխում: 11 երկսեռ շրջանաւարտներէն (որոնցմէ մին Յոյն պարմանուհի մը) մին կարգաց զգայուն ուղերձ մը: «Հրաժեշտի Երգէն» հաջ, Լուսաւորարարեան Սրբազանը ըրաւ փակման խօսքը, քաջալերական արտայայտութիւններ ընելով ձեռք բերուած արդիւնքին համար: Յորդորեց ընթացաւարտները որ միշտ առաջնորդուին Թարգմանչաց ոգիով և օրինակով: Ս. Աթուռոյ օրհներգը փակեց յոյժ տպուորիչ այս հանդէսը:

13 Մայիս 1981ին, Ս. Պապին վրայ եղած մահափորձի զազրիլի դէպքին առթիւ, հետեւեալ հեռագիրները փոխանակուած են.

Պետական Քարտուղարութիւն — Վատիկան

Երուսաղէմ, 14 Մայիս 1981

Յորապէս զգացուած ենք Սրբազան Քահանայապետին վրայ գործողութեան մահափորձին ամբողջ արարքին համար: Կը մաղթենք չուտափոյթ ապօքինում:

Եղիշէ ԱՐԳԵՊՍ. ՏԷՐՏԵՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Ամեն. Տ. Նշիշէ Արքեպս. Տէրտէրեան,
Պատրիարք Հայոց — Երուսաղէմ

Վատիկան, 20 Մայիս 1981

Ն. Սրբութիւնը իր շնորհակալութիւնը կը փայտնէ Ձեր ցաւակցական և բարեմաղթական հեռագրին համար:

ԿԱՏՏԻՆԱԿ ԲԱՅԱՐՕԼԻ
Քարտուղար Վատիկանի